րէն լեզուաբանական բաղդիրքի կազմութիւնը, որ երկար տարիների տքնաջան աշխատանքի պտուղ է եւ որ մի խումբ մտաւորականների նախաձեռնութեամբ հրատարակութեան պիտի տրուի առանձին հատորով:

Եգիպտոսի հայ հասարակութեան մէջ պրոֆ. Ց. Գայանանը հեղինակաւոր եւ ընդհանուր համակրանք վայելող անձ էր: Դաւանանքով բողոքական՝ ամբողջ կեանքում նա աշխատեց հայկական ընդհանուր գործերում եւ մահուանից առաջ կտակեց, որ իրեն թաղեն հայկական գերեզմանատանը լուսաւորչական ծէսով: Անցեալ տարի Եգիպտահայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ տօնուեց նրա հանրային - կրթական գործունէութեան 50 ամեակը - յարգանքի մի արտայայտութիւն, որին պրոֆ. Գայանանը արժանի էր ըստ ամենայնի:

III

ՅԱԿՈԲ ՓՈՉԱՐԵԱՆ

Մի տարի առաջ, 1933 թ. յունիս 3-ին, Երեւանի «Խորհրդ. Հայաստան» թերթի չորրորդ էջի ամենէն վարի անկիւնը, սեւ շրջանակի մէջ, տրուած էր հետեւեալ մանրատառ, հազիւ նշմարելի մահազդը:

«Հ. Կ. Խաչի Կենտկոմի տեղկոմը եւ կոլեկտիւը խոր ցաւակցութիւն են յայտնում նոյն կոլեկտիւի անդամ Յակոբ Փոչարեանի անակնկալ մահուան առթիւ»:

Այսքա՛ն և ուրիշ ոչինչ: Այնուհետև այլևս ո՛չ մի խօսք, ո՛չ Հայաստանի, ոչ էլ արտասահմանի թերթերում: Եթէ այդ օրհնեալ «տեղկոմն» ու «կոլեկտիւն» էլ չլինէին, ապարախտ Փոչարեանին ո՛չ մի յիշող չպիտի գտնուէր: Մինչդեռ հանգուցեալը այն մարդկանցից էր, որոնք բազմաթիւ ծանօթներ ու բարեկամներ ունեն եւ իրենք էլ բարեկամ են շատերին: Բացի այդ, Փոչարեանը նաեւ աչքի ընկնող հասարակական ու մշակութային գործիչ էր:

Արդարութիւնը պահանջում է, որ գոնէ այժմ, մահուան տարելիցի առթիւ, թէկուզ հակիրճ խօսքերով, վերյիշենք նրա կեանքն ու գործը:

Յակոբ Փոչարեանը Երեւան քաղաքից էր, ծնած 1865 թ.ին: Առաջնակարգ մրցանակով աւարտելով պետական գիմնազիոնը՝ ուսումնական թւականների վերջերը նա մտաւ Մոսկուայի համալսարանի պատմա-բանասիրական բաժինը, ուր աչքի ընկաւ իր փայլուն

digitised by

ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

ARAR@

ընդունակութիւններով, այնքա՛ն, որ համալսարանի վարչութիւնը նրան առաջարկեց մնալ համալսարանում եւ պատրաստուել պրոֆեսորութեան։ Քոչարեանը, սակայն, չհամաձայնուեց։ Նրան, ինչպէս այն ժամանակւայ մեր երիտասարդութեան լաւագոյն մասին, ուրիշ հարցեր էին զբաղեցնում, հայ յեղափոխութեան երկունքի օրեր էին։ մտքերը զբաւած էին ժողովրդասիրական – ազատագրական տենչերով։ Հայկական մթնոլորտը յաղեցած էր մի տրամադրութեամբ, որից չուտով ծնունդ պիտի առնէր Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Քոչարեանը այդ շրջանի երիտասարդութեան կառկառուն դէմքերից էր։ գործօն մասնակցութիւն ունէր մտաւոր – յեղափոխական շարժումների մէջ, համալսարանական ամբիոնը նրան չէր կարող հրապուրել։

1890 թ. ամառը Թիֆլիզում հիմնուեց Հ.Յ.Դաշնակցութիւնը։ Քոչարեանը կազմակերպիչ մարմնի անդամներից մէկն էր։ Եւ այնուհետեւ մինչեւ մահ կապուած մնաց այդ կուսակցութեան հետ։ Ճիշտ է, ակնկալուածի չափ փայլուն դեր չունեցաւ նրա մէջ,արգելք եղաւ նրա առողջական վիճակը։ Բայց կատարեց շատ պատասխանատու պաշտօններ եւ միշտ էլ պատուով դուրս եկաւ ստանձնած պարտականութիւններից։

Համալսարանը աւարտելուց յետոյ Քոչարեանը նւիրուեց ուսուցչական գործունէութեան, որ, սակայն, երկար չտեւեց։ Նա պաշտօն ստացաւ յայտնի դրամատէր Ալ. Մանթաշեանի մօտ, դարձաւ նրա մի տեսակ անձնական քարտուղարը եւ այդ պաշտօնում էլ մընաց, քանի գոյութիւն ունէր Մանթաշեանի դրամատիրական հաստատութիւնը։ Պաշտօնը տալիս էր նրան ահագին ազատ ժամանակ, որ նա ամբողջութեամբ նւիրում էր հասարակական գործունէութեան, կուսակցութեան եւ մշակութային աշխատանքների։

Հ. Յ. Դաշնակցութեան մէջ առանձնապէս եռանդուն աշխատանք կատարեց նա առաջին տարիներին, հիմնադրութեան շրջանում եւ նրանից յետոյ։ 1892 թ. նա մասնակցեց Դաշնակցութեան առաջին ընդհանուր ժողովին։Մինչեւ 1897 թ. ապրելով Թիֆլիսում՝ գործակցեց Քրիստափորին եւ Ս. Զաւարեանին, որոնք վարում էին Բիւրօի աշխատանքները։ 1897–99 թ. նա Հ. Յ. Դ. Բաթումի կոմիտէի անդամ էր։ 1900–1906՝ Բաղուի, 1907–8՝ Թիֆլիսի։ 1908 թ. վարեց Հ. Յ. Դ. խորհրդի քարտուղարի պաշտօնը։ Առհասարակ քարտուղարութիւնը Քոչարեանի բնական կոչումն էր, կարծես։1912–17թ. քարտուղար եղաւ Ազգային Բիւրօի։ 1917–18 թ. քարտուղարութիւն արաւ Ազգային Խորհրդում։ 1919 թ. քարտուղարի պաշտօն կատարեց Պօղոս Նուպարի եւ Հայաստանի Կառավարութեան պատ–

A.R.A.R.@

ւիրակների վարած բանակցութիւնների ժամանակ։ 1918–23թ. աշխատեց Հ. Հ. Փարիզի Պատւիրակութեան մէջ։ 1925 թ. մասնակցեց Հ. Ց. Դ. 10–րդ Ընդհ. Ժողովին։ Ապա մեկնեց Հայաստան, ուր մինչեւ մահ քարտուղար եղաւ Կարմիր Խաչի Կենտրոնական վարչութեան մէջ։

Միաժամանակ, ուր եւ լինում էր, Քոչարեանը կատարում էր հասարակական զանազան ուրիշ պաշտօններ – հոգաբարձու, թատերական ընկերութեան վարչութեան անդամ, անդամ բազմաթիւ մշակութային կազմակերպութիւնների եւ ընկերութիւնների, յաճախ, քարտուղարի, հաշւապահի կամ դանձապահի դերում։ Նա ամէն տեղ յարգւած ու սիրւած անձ էր։ Բոլորի դռները բաց էին նրա առաջ։ Նրա սիրտն էլ բաց էր ամենքի առջեւ։ Մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, տղամարդկանց թէ կանանց շրջանում Յակոբ Քոչարեանը տան մարդ էր, սիրելի հիւր, բարեկամ կամ ընկեր՝ նւիրւած եւ անկաշառ։

Յ. Քոչարեանը կարեւոր տեղ ունեցաւ եւ գրական – լրագրական աշխատանքի ընդարձակում։ Լաւ լեզուագէտ – ազատ խօսում ու գրում էր ռուսերէն ու ֆրանսերէն, տիրում էր անգլիերէնի ու գերմաներէնի – Քոչարեանը ունի արժէքաւոր թարգմանական գործեր։ Նրա գրչի տակից է դուրս եկել, օրինակ, Հ. Իբսէնի «Կառուցանող Սոլնէս» դրամայի, ինչպէս նաեւ մի քանի ուրիշ թատերգութիւնների թարգմանութիւնը։ Նա ունի հայերէն թերթերում բազմաթիւ յօդւածներ հայկական հարցին կամ հայ մշակոյթի զանազան երեւոյթներին նւիրւած, մեծ մասամբ Յ. Ք. ստորագրութեամբ։

Զարմանալի համեստ, իր անձը առաջ չմղող, իր մասին խօսք չսիրող, բայց հմուտ ու զարգացած, հետաքրքրական դէմք էր Յ. Քոչարեանը։ Այդ անսահման համեստութեան պէտք է վերագրել եւ նրա մահւան բոլորովին չնկատւած անցնելը։ Թող դէթ այս տողերը յարգանքի արտայայտութիւն լինեն սիրելի Յակոբի թանգագին յիշատակին։

IV

Վ. Դ. ՂՈՐՂԱՆՆԵԱՆ

Մայիս 24–ին Երեւանում վախճանւել է պրոֆ. Վ. Ղորղանեանը – հմուտ երաժշտական քննադատ – պատմագիր եւ արւեստի վաստակաւոր գործիչ։ Ծնւել էր 1865 թ. Թիֆլիսում։ Աւարտել էր Թիֆլիսի ռէալական դպրոցը, ապա՝ Պետերբուրգի Ինժեներական

digitised by